


ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ԱՆՊՈՄ ՄԸ ՆՈՒՐՈՒԱԾ՝ ԱՆԵՔՍԱՆԴՐ ՍԱՐՈՒԽԱՆԻՆ



Տարուխան

أ. ساروخان
A. Saroukhan
Ա. Սարուխան

Ողբացեալ երգիծանկարիչ՝ Ալեք-
սանդր Սարուխանի նուիրուած գեղա-
տիպ հատոր մը լոյս տեսած է Եգիպ-
տոսի մէջ՝ 500 տպաքանակով։ Գիրքը
ձօնուած է անուանի արուեստագէ-
տին, իր տիկնոջ՝ Սիրվարդ
Սարուխանի կողմէ, եւ հրատարակ-
ուած է Nubar Printing Houseի կողմէ։
Գեղարուեստական խմբագրութիւնը
կատարած է Եղուարդ Յակոբեան, իսկ
կողքի նկարը գործն է այժմ Մոնթ-
րէալաբնակ՝ արուեստագէտ Արա
Աւետիսեանի։ 119 էջերէ բաղկացած

այս հատորը կը պարփակէ կենսագր-
ական նօթեր եւ վերլուծական ալ-
նարկ հայերէն, անգլերէն, ֆրան-
սերէն եւ արաբերէն լեզուներով։
Զանազան բաժիններու մէջ, ի մի հա-
ւաքուած են Սարուխանի երգիծաղի-
մանկարները տարբեր շրջաններու
քաղաքական կեանքը ցոլացնող երգի-
ծանկարներ, Համաշխարհային Բ.
Պատերազմի նուիրուած երգիծա-
նկարներ, գեղարուեստի այլ գոր-
ծեր, եւ ընկերային կեանքի ծիծաղելի
կողմերը ցոլացնող երգիծանկարներ։

ԾԱՂՐԱՆԿԱՐԻՉ ՏԱՄԱՏԵԱՆ ՈՉ ԵՒՍ Է



Խաչիկ Տաճատեան

Ռումանիոյ մայրաքաղաք Պուքրէշի
մէջ իր մահկանացուն կնքած է
աշխարհահռչակ ծաղրանկարիչ
Խաչիկ (Չիկ) Տաճատեան։

Ան հռչակաւոր էր իր քաղաքական
ծաղրանկարներով, որոնք տեւապէս
լոյս կը տեսնէին ռումանական եւ եւ-
րոպական կարգ մը օրաթերթերու եւ
զանազան հրատարակութիւններու
մէջ։

Ան նուրբ եւ յաջող նկարիչ մըն էր
միաժամանակ։

ԱՆՈՒԱՆԻ ՆԿԱՐԻՉ Ռ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ ՄՈՆԹՐԵԱԼԷՆ ԱՆՑԱԻ

ղեցւոյ կողմէ։

Հայագգի նկարիչ Ռումուլֆ Խաչա-
տուրեան, որ մեծ հռչակ եւ յարգանք
կը վայելէ Սովետ Միութեան մէջ, Եւր-
կուշաբթի Հոկտեմբեր 7-ին, Մոնթ-
րէալէն անցաւ դէպի Տիբրոյթ իր ճամ-
բուն վրայ։ Պրն. Խաչատուրեան իր
գործերը պիտի ցուցադրէ Տիբրոյթի
եւ Լոս Անճելըսի մէջ։ Տիբրոյթի
ցուցահանդէսը կազմակերպուած է
տեղւոյն Ս. Յովհ. Մկրտիչ Եկե-

իր քանի մը ժամուան կեցութեան
ընթացքին, արուեստագէտը այցելեց
Ալեք Մանուկեան վարժարանը եւ
ԹՄՄ-ի նոր կեդրոնը, ու ապա,
մեկնեցաւ Տիբրոյթ։

Յաջողութիւն կը մաղթենք
արուեստագէտին Ամերիկեան ցամա-
քամասին վրայ իր զոյգ ցուցահան-
դէսներուն համար։

ԳԱՍ

ԹԵԱՆ
ԿԷ

աղին Գասպարով
ին մէկ սխալէն՝
եց զայն 25-րդ
տով, իւրաքան-
կէտ։
բաղկացած այս
այեանը պարտի
սնակ եւ կամ՝
էտ։

ABABA
14005. 1985
o ypegevoesed
boredaban
e Detpovse
→